

Ծ Ո Վ Ը

Իրիկուան ժամուն, օրն երբ մերձ ի մահ,
Կը շիջի երկնի խորքին մէջ սատաի,
Կ'արթննայ յանկարծ ծովն հազարամեայ,
Շարժելով ի լիւղ մարմինն ափէ ափ:

Փրփուրը բերնին կը վազէ խնդրունդ,
Խառնիխուն հողմով, խեռ եւ ապստամբ,
Սի'րտ ամբարհաւած, անդունդէ անդունդ
Սընած եւ մեծցած դառն առանձնութեամբ:

Շառաչն ու իր կոծ կը շրջին ճոխճեմ
Ըստուերով պատած ժայռերուն խորքին,
Որոնց մենութեան եւ մութին ընդդէմ
Կ'եղերերդէ ճայն ու կ'ողբայ քամին:

Մերթ, խմբած ի մի կոհակներն իր բիւր,
Կը խուժէ քարափ բացերէն իր լայն,
Ու արշաւանքն իր նրման է տըխուր
Մահուան դէմ ելլող վաշտերուն շարժման:

Իր յորձանքներուն մակերեսն ի վեր
Չեն սահիր թեւերն առազաստին պերճ,
Հոն ամպն ու մըշուշ իրար են գրկեր,
Բուքն հոն կը յուզէ փողերն իր անվերջ:

Ու իրարանցման ծոցին հողմէ հողմ,
Միշտ ինքն է ներկայ մականն ափին բիրտ,
Միշտ իր կամքն է որ կ'իջիս ամէն կողմ,
Ինքն հըզօր արքայ եւ տէր բարկասիրտ:

Երբ շանթերն հոյլ հոյլ, յեցած կողք կողքի,
Կը հասնին ըշտապ լեռներէն հըրոյ՝
Ան կը ժողվէ իր կոհակներն ի մի
Փշրելով անոնց զայրոյթն ու դըրոհ:

Ու մահուան վերեւ շանթերուն մոլիւն,
Ու խարակներուն, ամպին թըխադոյն,
Ան բարձր կը շաչէ յաղթերդն ու քրքիջ
Իր ծանրաթաւալ ճորտ ալիքներուն:

Քարաժայռերուն ծովն է ան անծայր,
Խորտակուած կեանքի թառաչ եւ յուզում,
Իր սրտին վըրայ դարերէ ի դար
Յաւն ան կ'օրօրէ մարդկութեան տրտում:

Ու երբ փաթթուած լուսնի շողերով,
Կը նիւհէ ընդմէջ խուժերուն անանց,
Դէմքն է ան լուսեղ երազին գինով,
Եւ համապարփակ մեծ խաղաղութեանց:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ԽԱՆՕԹ.

Այս քերթուածը մաս կը կազմէ « ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ » տիտղոսեալ հատորիմ, որ թղթորդիմ պատրաստ է հրատարակութեամբ:

ԱՌԱՋԻՆ ՇՈՂԸ

Արշալոյսէն շողիկ մ'իջաւ մեղմաբար.
Իրիկնային շողն էր այս,
Որ արտասուեց ամբողջ գիշերն ինձ համար,
Եւ խորհեցաւ իմ վըրաս:

Բայց նա հիմա գիրդ թեւերով տըղու պէս
Կուրծքիս փարած կը հանդէի,
Արեւներէն նա բաժնըւած է կարծես,
Սիրելու գիս աւելի:

Ո՛հ, կեանքիս մէջ այսքան անոյշ կարօտանք
Ես չունեցայ աշխարհէն,
Երազ մը չէ՛, ոչ թափանցիկ սուտ պատրանք՝
Ինչպէս մարդիկ կը խաբեն:

Եւ երբ շողիկն ես սիրավառ գրկեցի,
Իմ սիրտս ըսաւ՝ Գարուն է.
Ինչպէս մեղուն երբ վարդին ծոց կը հանդէի,
Արփին կ'ըսէ. Քերթուած մ'է:

ՎԵՐԱԴԱՐՁ

Բոյնըդ կերթաս դուն ուրախ
Ինչպէս երէկ եւ միւս օր,
Ու չողէ չող թեւաբախ՝
Քեզ կ'ընկերէ երգ մ'աղուոր:

Փոքր աստղերու պէս ծաւի
Մարմինդ կ'ըլլայ բացխլիւիկ,
Քու թեւերդ են արծաթի
Թեթեւօրէն թափանցիկ:

Եւ միշտ չողերը փոքրիկ
Քեզ կ'ընկերեն մինչեւ բոյն,
Որ վար իջնես հանդարտիկ

Միջոցներու անհունէն:
Հուսկ կը յանձնեն աստղերու՝
Գիշերն օրօր երգելու:

ՍՊԱՍՈՒՄ

Մենք օր մ'անշուշտ պիտ' հանդիպինք իրարու,
Արեւուն տակ, կամ չիրմի մէջ մենաւոր:
Անոյշ խօսքեր պահած եմ քեզ ըսելու,
Եւ ձօնելու լոյսն աչքերուս մեղրածոր:

Որքան նըման է մարդուս սիրտն աստղերուն,
Որ մութին մէջ կարծես իրար կը փնտռեն:
Կեանքն այսպէս է եւ որոնում, անձկութիւն,
Եւ հառաչանք յիշատակի մ'ետեւէն:

Աղքատի պէս ճամբաներու եղերքին՝
Քեզ կը սպասեմ, ո՛վ անծանօթ սիրելի,
Մի՛ դուցէ դուն հասնիս ինձ այն վայրկեանին՝

Երբ կը փակեն աչքերս ձեռքեր զըթալի:
Շիրմին մէջ ալ պիտ' իրարու ըլլանք մօտ
Ողջունելու նոյն յարութեան առաւօտ:

ԳԵՐԵՋՄԱՆԻ • ՃԱՄԲԱՆ

Այս սուրբ ուղին դոր կը ստուերեն նոճիներ
Գիտե՞ս քանի հոն բիւր մայրեր մարեցան...
Քանի՞ հազար մոմ լոյս սփռեց աղօթիկեր,
Սեւ արցունքի՛ այդ բոցերն ալ փոխուեցան:

Պիտի անցնինք օր մը մենք ալ այս ճամբան,
Ամէն քայլի չող մ'արեւու թողնելով,
Մայրեր թերեւս հասնին մինչեւ գերեզման՝
Ըստեղծողէն դուրս եւ շնորհ հայցելով:

Մեր անունն ալ պիտի ցըրուի հովին հետ,
Պիտի դառնան տենչերը մեր տրտում շուք,
Եւ պիտ' յիշենք վերէն այս սուրբ արահետ

Միշտ մենաւոր, միշտ ըստուերոտ եւ միշտ սուգ:
Ահա ուրիշ թախծոտ թափօր մ'ալ կ'անցնի.
Վաղը թերեւս... լացող զանդակ մ'ալ ինձի...:

ԿԱՐՕՏ ԳԻՇԵՐՈՒՄԱՆ

Կը սպասեմ կարօտ գիշերուան մութին
Աստղերուն փոքրիկ, աստղերուն խոշոր.
Կ'ուզեմ որ անցնին տիւ ու ժամանակ
Եւ դայ մեղմաքայլ լըռութիւնը խոր:

Ծըծեմ չիթ առ չիթ կաթնածոր աստղեր,
Փարիլ աշխարհին, փարիլ շուքերու,
Հանգչին հէգ աչքերս արեւէն լիկող
Ու սիրտս անուշայ փափաքով լալու:

Երբ ծածկէ զիս մութն առանց ճնշելու,
Կ'ուզեմ գրկել մէգ, գրկել խօլ խաւար,
Տարածուիլ մենակ մայր հողի կուրծքին,

Որ սիրտս անուշայ փափաքով լալու:
Ապա սեւեռած աչքերս երկինքին՝
Բարեւ տամ հեռուէն Հայկ համաստեղին:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Հալէպ, 1956